

Ս. ՏԵՂԵԱՅ ԴԻԻԱՆԷՆ

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ

Օգոստոսի 20ին, Երուսաղիմ ժամանեցին Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան հսկող գլխավոր ձարտարապետներ՝ Պր. Եղուարդ Իւթիւնեան եւ Թրուվլո, որոնք կը համահին Փարիզին, քննելու համար կասարուող աշխատանքները եւ պատրաստելու համար նորոգութիւններու յոբորդ մասը: Բնիկ եւք կասարուած աշխատանքները, մասնագիտ. - ձարտարապետները պատրաստեցին յառաջիկայի կասարուելիք զոծերու յաւակագիծերը: Այս առթիւ, Պր. Ե. Իւթիւնեան Պատրիարքարանիս ներկայացուց նշեւեալ ձեղեկագիրը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ ԵՐԵՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Տեղեկագիր ընդհանուր գործերուն, կասարուած 3 Յուլիս 1961 թուականէն մինչեւ 19 Օգոստոս 1962:

31 Յուլիս 1960ին ստորագրուեցաւ համաձայնագիր մը Երուսաղէմի Ս. Յարութեան Տաճարի իրաւատէր երեք համայնքներու մասնագէտներուն կողմէ, որոնք են՝ Բրոթ. Սրլանտոս, Սրթոտորս Յունաց համայնքին կողմէ,

Պր. Ժան Թրուվլո, Լատին համայնքին կողմէ,

Պր. Եղուարդ Իւթիւնեան, Հայ համայնքին կողմէ:

Յետ վաւերացման վերոյիշեալ համաձայնագրերուն՝ իրաւատէր համայնքներու կողմէ, իոյն տարուան ընթացքին, երեք մասնագէտներու պատրաստած յառակագիծերը եւ նախահաշիւները ընդունած ըլլալով, սկսուեցան հետեւեալ աշխատանքները:

Առաջին մաս

1. — Հիմերու քննութեան համար պեղումներ.
2. — Ամրացում հիմերու եւ ստորերկրեայ պատերու.
3. — Հնագիտական խուզարկումներ.
4. — Խուզարկում քիւզանդական եւ այլ ջրհորներու.
5. — Յիշեալ ջրհորներու չորացում եւ ամրացում.
6. — Ջուրերու պարպում:

Սկիզբ գործերու՝ 3 Յուլիս 1961,

Վերջ մասնակի գործերու՝ 9 Յուլիս 1962:


Երկրորդ մաս

1. — Ծեփերու վերացում հարաւային թեւի պատերէն եւ կամարներէն.
2. — Վերացում հարաւային թեւի տանիքի քարային ծածքին.
3. — Դանդում հարաւային թեւի յաւելեալ պատերուն.
4. — Զետեղում փայտեայ նեցուկներու՝ յիշեալ կամարին ներքեւ.
5. — Հայոց վերնատան եկեղեցիին պատերու ծեփի վերացում.
6. — Պեղում եւ քննութիւն երեւցած շինուածքներուն:

Սկիզբ գործերու՝ 9 Յուլիս 1962,

Այսօրուան տեղեկագիր՝ 19 Օգոստոս 1962:

Հարաւային թեւի նորոգութիւնները պիտի տեսնեն մօտաւորապէս երկու տարի:



Ս. Սարգսյանի Ֆանարի հայոց բաժնին մեջ՝ Նրախառնուրաց Սեդանի
 արեւմտեան պատը, ուր վերցնում ծեփերուն ռակեն յայտնուեցան
 զոյգ սիւներ եւ խաչքարեր:

1958 թ Սեպտեմբերին եւ Հոկտեմբերին, լաստակերտ մը կառուցուեցաւ հարաւային թեւին մէջ, սկսելու համար երկրորդ մասի աշխատանքը:

Մինչեւ օրս կատարուած ծախսեր.

1958 թին՝ 4,200 Տինար, որուն մէկ երրորդը վճարեց իւրաքանչիւր համայնք.

Յոյն Սրթոտոքս Պատրիարքարան՝ 1,400

Լատին համայնք 1,400

Հայոց Պատրիարքարան 1,400

Ա. Մաս. — 3 Յուլիս 1961 Եւ 9 Յուլիս 1962,
վճարման արտօնագրեր թիւ 1-51.

Իւրաքանչիւր համայնքի բաժին՝

Յունաց Պատրիարքարան 1,762,785

Լատինաց Միաբանութիւն 1,810,610

Հայոց Պատրիարքարան 1,705,273

Բ. Մաս. — 9 Յուլիս 1962 Եւ 19 Օգոստ. 1962

Իւրաքանչիւր համայնքի բաժին՝

Յունաց Պատրիարքարան 324,165

Լատինաց Միաբանութիւն 324,165

Հայոց Պատրիարքարան 239,470

Վերոյիշեալ գումարներուն վրայ պէտք է աւելցնել Ֆրանսացի վարպետին ծախսերը, վճարուած երեք համայնքներուն կողմէ:

Պր. Հանրի Տէշանի ծախսերը կը վճարուին Փարիզի «Կելան» ընկերութեան միջոցաւ եւ Ս. Տեղեաց պահպանութեան ձեռքով, Փարիզ, 27 ըիւ Սարիթ:

Ամսավճարներու հաշիւ, ներառեալ ընկերային ապահովագրութիւնները.

Յունիս 152 տինար

Յուլիս 152 տինար

Գումար 304 տինար

Պր. Հանրի Տէշանի ճանապարհածախս.

Յր. Ֆրանք 219,000, որ կը համապատասխանէ 158.700 տինարի, որը գումարը կը բարձրացնէ 462,700 տինարի:

Իւրաքանչիւր համայնքի բաժին՝

Յունաց Պատրիարքարան 154,233

Լատինաց Միաբանութիւն 154,233

Հայոց Պատրիարքարան 154,233

Ընդհանուր գումար մինչեւ՝ այսօր՝ նշած ծախսերուն՝ 10.829 տինար 166 ֆիլս:

Իւրաքանչիւր համայնքի կողմէ վճարուած գումարներ.

Յունաց Պատրիարքարան 3,641,183

Լատինաց Միաբանութիւն 3,689,006

Հայոց Պատրիարքարան 3,498,976

Վերոյիշեալ գումարները վճարուեցան համայնքներուն անունով մասնագիտական գրասենեակի կողմէ ներկայացուած հաշուեցոյցերու հիման վրայ, իբրեւ գործերուն հսկող:

Այս հաշիւներէն դուրս կը մնան.

1. — Մասնագէտ ճարտարապետներու թոշակի, ճամբորդութեան եւ այլ ծախսեր,

2. — Հասարակաց մասնագիտական գրասենեակին մէջ աշխատող ճարտարապետներու թոշակներ:

Հաստատուած Հասարակաց Մասնագիտական Գրասենեակին կողմէ:

Երուսաղէմ, 22 Օգոստոս 1962

Յունաց Պատրիարքարանի ներկայացուցիչ՝ ճարտարապետ Գօլաս.

Լատինաց Գիւսթոտիի ներկայացուցիչ՝ ճարտարապետ Գուանոն.

Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչ՝ ճարտարապետ Տիրան Ոսկերիչեան: